## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Վ Ա Յ Ո Ց  Ձ Ո Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# ՈՐՈՇՈՒՄ

«23» փետրվարի 2010թ
ք. Եղեգնաձոր

N 12

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ , ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 329-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի « Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2010 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N35 Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N83-Ա որոշումը .

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ԵՄ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական , զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինների կանոնադրությունները (հավելված 1,2):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ